ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 04 » մայիսի 2015 թվական N: 84-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N 59-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի ապրիլի 6-ի «Քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայություններ ստեղծելու, ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի հունիսի 16-ի թիվ 228 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 59-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝

սույն որոշման մասին իրազեկել ըստ պատկանելության:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2015 թվականի
մայիսի 04-ի թիվ 84 -Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2010 թվականի
ապրիլի 6-ի թիվ 59-Ա որոշման

ՑԱՆԿ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ

1. ***Կապի և ազդարարման ծառայություն***, ծառայության պետ՝ «ԱՐՄԵՆՏԵԼ» փակ բաժնետիրական ընկերության հյուսիսային տարածքային կենտրոնի «Շիրակ» ուղղության ղեկավար:
2. ***Ինժեներական ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ:
3. ***Բժշկական ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ:
4. ***Տրանսպորտային ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ:
5. ***Առևտրի և սննդի ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ:
6. ***Էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն***, ծառայության պետ՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղի տնօրեն:
7. ***Բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ:
8. ***Հասարակական կարգի պահպանման ծառայություն***, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ:
9. ***Նյութատեխնիկական մատակարարման ծառայություն,*** ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ:

10. Կոմունալ-տեխնիկական ծառայություն, ծառայության պետ՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության միջազգային գլխավոր տնօրենի տեղական տեղակալ:

11. Բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն, ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ